


Ինչպե՞ս գրանցվել օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգում

Քայլ 1. Մուտք գործեք fs.emis.am կայք: Սեղմեք «Մուտք» կոճակը (Նկար 1):


Նկար 1.



Քայլ 2. Կրթական պատուհան համակարգ մուտք գործելու կամ գրանցվելու համար: Սեղմեք «Գրանցում» կոճակը: Մուտքագրեք էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ, այնուհետև կրկնեք արդեն իսկ մուտքագրած գաղտնաբառը (Նկար 2):


Բոլոր դաշտերը ենթակա են պարտադիր լրացման:

Նկար 2.




Քայլ 3. Տվյալները մուտքագրելուց հետո էկրանին կերևա հաղորդագրություն՝ «Հաշիվը ակտիվացված է» (Նկար 3):

Նկար 3.




Քայլ 4. Մուտք գործեք այն էլեկտրոնային փոստ, որը նշել եք գրանցվելիս: Բացեք «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնից» ստացված նամակը (Նկար 4): Եթե մուտքային նամակներում այն չգտնեք, ստուգեք նաև «Սպամ» բաժինը:

Նկար 4.



Քայլ 5. Սեղմեք «Ակտիվացնել» կոճակը: Այն Ձեզ կտեղափոխի ընդունելության համակարգի կայք: Էկրանին կերևա հաղորդագրություն այն մասին, որ Ձեր հաշիվն ակտիվացված է (Նկար 5): Սա նշանակում է, որ համակարգում Ձեր գրանցումն ավարտված է:

Նկար 5.



Հ.Գ. Ձեր օգտահաշիվ մուտք գործելու համար կայքի գլխավոր էջում սեղմեք «Մուտք» կոճակը, այնուհետև նորից «Մուտք» դաշտը (Նկար 6): Մուտքագրեք այն տվյալները, որոնցով գրանցվել եք համակարգում:

Նկար 6.

The image shows a login form titled "Մուտք" (Login) with a close button (X) in the top right corner. It contains two input fields: "Էլփոստ *" (Email) and "Գաղտնաբառ *" (Password). Below each field is a red error message: "Պարտադիր է լրացնել" (Mandatory to fill). Below the password field is a link: "Մոռացել եմ գաղտնաբառս" (I forgot my password). At the bottom is a blue button labeled "Մուտք" (Login) and a link "Գրանցում" (Registration).

Կբացվի Ձեր օգտահաշիվը (Նկար 7), որի միջոցով էլ հետագայում կկարողանաք հայտ ներկայացնել որևէ ուսումնական հաստատություն, հետևել դրա ընթացքին, իրականացնել այդ հայտի հետ կապված մի շարք գործողություններ:

Նկար 7.

The image shows a user dashboard. The header is blue with the text "Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգ" (Foreign Applicants Admission System). In the top right corner, there is a red-bordered box containing a language dropdown, a user profile icon, and a menu with three items: "Կարգավորումներ" (Settings), "Հայտեր" (Applications), and "Ելք" (Logout). The main content area has a title "Ընտրեք նախընտրած մասնագիտությունը" (Choose your preferred specialization) and a subtitle "կամ ընտրեք ԲՈՒՀը" (or choose the university). Below this are two cards: "ԲՈՒՀԵՐ" (Universities) with a graduation cap icon and "Կրթական ծրագրեր" (Educational Programs) with a circular arrow icon. Each card has a brief description of the service.


Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը «Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգի» (այսուհետ՝ համակարգ) իր էջ մուտք գործելու համար նախ պետք է մուտքագրի username և password: Այնուհետև սեղմի Sign in կոճակը (Նկար 1):

Նկար 1.



Կբացվի նախարարության էջը, որտեղ հասանելի են համակարգում գրանցված օգտատերերի տվյալներն ու արդեն իսկ ներկայացված հայտերը (Նկար 2):

Նկար 2.



Գրանցված օգտատերերի տվյալներին ծանոթանալու համար անհրաժեշտ է սեղմել համանուն կոճակը: Կբացվի աղյուսակ (Նկար 3), որտեղ ներկայացված կլինեն օգտատիրոջ անձնական տվյալները՝ անուն, ազգանուն, ծննդյան ամսաթիվ, էլ. փոստի հասցե, ինչպես նաև գրանցմանն առնչվող տվյալներ՝ հերթական համար, գրանցման ամսաթիվ, ակտիվացման ամսաթիվ, վերջին մուտքը համակարգ և նշում դիմումի առկայության կամ բացակայության մասին:

Նկար 3.

22. ԿԱՍՄ

Ցուցադրել 25 քառուսմ

Փնտրել

ID	Էջ չափ	Անուն ազգանուն	Գրանցման ամսաթիվ	Ակտիվացման ամսաթիվ	Ծննդյան ամսաթիվ	Վերջին մուտք	Դիմում
10059	anna.disabilityinfo@gmail.com	Robert Hovsepian	2023-07-14 14:25:20	2023-07-14 14:28:32	1988-02-05	2023-07-14 14:30:58	Ընկ
10058	anna.shoghakat@gmail.com	Հայկի Ուրթյան	2023-07-13 09:34:23	2023-07-13 09:35:40	2006-02-05	2023-07-18 16:38:07	Ընկ
10058	anna.shoghakat@gmail.com	Anna Hovsepian	2023-07-13 09:34:23	2023-07-13 09:35:40	1989-02-05	2023-07-18 16:38:07	Ընկ
10057	lianasoyan2895@gmail.com		2023-03-30 12:05:13	2023-03-30 12:05:52		2023-03-30 12:06:12	Զուկ
10056	liana.soyan@ktak.am		2023-03-30 11:01:31			2023-03-30 14:24:28	Զուկ
10054	arakelyanhrant@gmail.com	Arant Arakelyan	2023-03-15 12:20:44	2023-03-15 12:21:35	1985-06-01	2023-06-06 12:13:44	Ընկ
10007	arakelyanhrant2@gmail.com		2022-12-15 10:25:45	2022-12-15 14:45:19		2023-05-16 09:46:08	Զուկ

Ցուցադրված է 1-ից 7 քառուսմ 7-ից

Առաջին Նախորդ 1 Հաջորդ Վերջին


Հայտերին ծանոթանալու համար անհրաժեշտ է սեղմել համանուն կոճակը: Բացված էջում (Նկար 4) ներկայացված կլինեն տեղեկություններ ներկայացված հայտի մասին՝ հայտ ներկայացրած անձի անուն, ազգանուն, հերթական համար, հաստատության անվանում, մասնագիտություն, դիմումի տեսակ, կրթական աստիճան, դիմելու ամսաթիվ, դիմումի կարգավիճակ, նախարարության կարգավիճակ և բուհի կարգավիճակ:

Նկար 4.

Ցուցադրել 25 գրառում						
Փնտրել						
ID	Անուն ազգանուն	Հաստատության անվանումը	Դիմումի տեսակ	Դիմել է	Մասնագիտությունը	
000240	Անուն	թեսթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Մագիստրատուրա	Բնօգտագործման տնտեսագիտություն	
000240	Անուն Ազգանուն	թեսթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Մագիստրատուրա	Բնօգտագործման տնտեսագիտություն	
000240	Լիանա Ասոյան	թեսթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Մագիստրատուրա	Բնօգտագործման տնտեսագիտություն	
000239	Անուն	Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան	Ընդունելություն	Մագիստրատուրա	Նախադպրոցական մանկավարժություն և մեթո	
000239	Անուն Ազգանուն	Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան	Ընդունելություն	Մագիստրատուրա	Նախադպրոցական մանկավարժություն և մեթո	
000239	Լիանա Ասոյան	Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան	Ընդունելություն	Մագիստրատուրա	Նախադպրոցական մանկավարժություն և մեթո	
000236	Անուն	թեսթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Մագիստրատուրա	Գեղարվեստական լուսանկարչություն	
000236	Անուն Ազգանուն	թեսթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Մագիստրատուրա	Գեղարվեստական լուսանկարչություն	
000236	Լիանա Ասոյան	թեսթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Մագիստրատուրա	Գեղարվեստական լուսանկարչություն	
Ցուցադրված է 1-ից 9 գրառում 9-ից						
Առաջին Նախորդ 1 Հաջորդ Վերջին						


Հերթական համարն (ID) ակտիվ հղում է, որի վրա սեղմելու պարագայում կբացվի նոր պատուհան (Նկար 5): ԿԳՄՄՆ-ն հնարավորություն կունենա դիտել դիմում-հայտը:

Նկար 5.



Հնարավոր է նաև հայտերը տեսնել ֆիլտրված՝ ըստ դիմումի տեսակի և կրթական աստիճանի: Ֆիլտրելու համար անհրաժեշտ է «Հայտեր» էջի վերևի ծախ հատվածում կատարել համապատասխան ընտրություն (Նկար 6):

Նկար 6.



ՀՀ բուհեր օտարերկրյա դիմորդների ընդունելության էլեկտրոնային համակարգի նկարագրի համաձայն՝ ԿԳՄՍ նախարարությունը համակարգի օգտատերերի խմբերից մեկն է, որին հասանելի են հետևյալ գործառույթները՝

- բուհերի և մասնագիտությունների դիտում,
- դիմորդի բուհի, մասնագիտության անձնական տվյալների և կցված փաստաթղթերի դիտում,

- դիմորդի կողմից կցված փաստաթղթերի վերջնական հեռացում,
- դիմումի կարգավիճակի փոփոխություն,
- դիմումի կարգավիճակի դիտում,
- կացության հայտի կարգավիճակի գրանցում/խմբագրում,
- կացության հայտի կարգավիճակի դիտում,
- հաշվետվություններ:

Կա նաև մեկ այլ խումբ՝ «ԿԳՄՄՆ-ին հավասարեցված օգտատերեր»: Այս խումբը համակարգում ունի բացառապես դիտման թույլտվություն, այսինքն՝ խմբի օգտատերերը չեն կարող իրականացնել՝

- դիմորդի կողմից կցված փաստաթղթերի վերջնական հեռացում,
- դիմումի կարգավիճակի փոփոխություն,
- կացության հայտի կարգավիճակի գրանցում/խմբագրում:


Հ.Գ. Դիմում-հայտի ընդունելի լինելը բուհից հետո պետք է հաստատվի նաև ԿԳՄՄՆ կողմից:

Ինչպե՞ս փոխել գաղտնաբառը և/կամ էլ. փոստի հասցեն


Քայլ 1. Մուտք գործեք Համակարգ և գլխավոր էջի աջ վերևի անկյունից մուտք գործեք «Կարգավորումներ» բաժին (Նկար 1):

Կբացվի պատուհան, որտեղ կարող եք փոխել գրանցվելիս Ձեր կողմից մուտքագրված էլ. փոստի հասցեն և/կամ գաղտնաբառը (Նկար 2):

Նկար 1.




Նկար 2.



Քայլ 2. Էլ. փոստի հասցեն փոխելու համար պետք է ջնջեք նախորդը, լրացնեք նոր հասցեն և սեղմեք «Փոխել» կոճակը: Դաշտը դատարկ թողնել չեք կարող, արդեն իսկ մուտքագրված էլ. փոստի հասցեն կրկնել չեք կարող, էկրանին կերևա հաղորդագրություն այն մասին, որ գրել եք Ձեր ընթացիկ հասցեն (Նկար 3):

Նկար 3.



Քայլ 3. Գաղտնաբառը փոխելու համար բացված էջում սեղմեք «Փոխել գաղտնաբառը» կոճակը (Նկար 4): Կբացվի պատուհան, որտեղ անհրաժեշտ է մուտքագրել ընթացիկ գաղտնաբառը, գրել նորն ու կրկնել այն: Այնուհետև պետք է սեղմել «Փոխել» կոճակը:

Նկար 4.

Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգ

Հարգավորումներ

Փոխել էլփոստը | **Փոխել գաղտնաբառը**

Ընթացիկ գաղտնաբառ *

Նոր գաղտնաբառ *

Նոր գաղտնաբառ *

Փոխել

Էկրանին կերևա հաղորդագրություն այն մասին, որ գաղտնաբառի փոփոխությունը կատարված է (Նկար 5):

Նկար 5.

Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգ

Հարգավորումներ

Փոխել էլփոստը | Փոխել գաղտնաբառը

Ձեր գաղտնաբառը փոխված է: Խնդրում ենք նորից մուտք լինել՝ օգտագործելով հենց նոր ստեղծած գաղտնաբառը


Հ.Գ. Օգտահաշվում այլ գործողություններ իրականացնելու համար անհրաժեշտ կլինի համակարգ մուտք գործել նոր տվյալներով՝ փոփոխված գաղտնաբառով և/կամ էլփոստի հասցեով:

Ինչպե՞ս վերականգնել գաղտնաբառը

Եթե չեք կարողանում մուտք գործել համակարգ, պատկերվում է հաղորդագրություն սխալ գաղտնաբառ մուտքագրելու հավանականության մասին, ապա կարող եք վերականգնել Ձեր գաղտնաբառը:


Քայլ 1. Սեղմեք «Մոռացել եմ գաղտնաբառը» կոճակը (Նկար 1):

Նկար 1.



Քայլ 2 . Կբացվի «Գաղտնաբառի վերականգնում» պատուհանը (Նկար 2): Պետք է մուտքագրեք այն էլ. փոստի հասցեն, որով գրանցվել եք համակարգում, այնուհետև սեղմեք «Ուղարկել» կոճակը:


Նկար 2.



Քայլ 3. Մուտք գործեք էլ. փոստ, մուտքային նամակների մեջ գտեք «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնից» ստացած հաղորդագրությունը:

Սեղմեք «Փոխել գաղտնաբառը» կոճակը (Նկար 3):

Նկար 3.



Քայլ 4. Կբացվի պատուհան (Նկար 4), որտեղ անհրաժեշտ է մուտքագրել նոր գաղտնաբառ և կրկնել այն: Այնուհետև համակարգի ստեղծարարի վրա սեղմեք Enter կոճակը:

Կպատկերվի հաղորդագրություն այն մասին, որ փոփոխությունը կատարված է (Նկար 5):


Նկար 4.

Նկար 5.

Ինչպե՞ս ընտրել բուհն ու դիմել


Քայլ 1. Համակարգի գլխավոր էջում սեղմեք «Բուհեր» կոճակը (Նկար 1):

Նկար 1.



Կբացվի նոր էջ, որտեղ ներկայացված են համակարգում առկա բոլոր ուսումնական հաստատությունները (Նկար 2) :

Նկար 2



Քայլ 2. Սեղմեք այն հաստատության անվան վրա, որտեղ ուզում եք ուսանել:

Կբացվի տվյալ հաստատության էջը, որտեղ կարող եք տեսնել մասնագիտությունների ցանկը: Յուրաքանչյուր մասնագիտության հետ նշված կլինի նաև կրթական աստիճանը, օրինակ՝ մագիստրատուրա (Նկար 3):

Նկար 3.

Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան

Գլխավոր / Ուսումնական հաստատություններ / Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան



📁 | Նշված չէ

📁 | Նշված չէ

📁 | Նշված չէ

📁 | Նշված չէ

Կրթություն / Նախադպրոցական մանկավարժություն
Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա (Մագիստրատուրա) 011201.01.7

Քայլ 3. Սեղմեք նախընտրած մասնագիտության անվան վրա, կբացվի նոր պատուհան (Նկար 4), որտեղ ներկայացված կլինեն տվյալներ հաստատության, մասնագիտության, կրթական աստիճանի մասին, կլինի նաև դիմելու հնարավորություն: Սեղմեք «Ընդունելություն» կոճակը:

Նկար 4

Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգ

011201.01.7 - Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա
 Մագիստրատուրա

Հաստատություն	Դիմել
Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան	Ընդունելություն Մագիստրատուրա

Քայլ 4. Կբացվի հայտ ներկայացնելու էջը (Նկար 5), որտեղ պետք է մուտքագրեք անհրաժեշտ բոլոր տվյալներն ու ամեն դաշտից հետո պարտադիր սեղմեք «Պահպանել» կոճակը:

Նկար 5.

Հայտ N 000069
 011201.01.7 - Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա
 Մագիստրատուրա

Անձնական տվյալներ

Անուն, ազգանուն *

Ծննդյան ամսաթիվ * mm/dd/yyyy

Ծննդյան վայրը *

Բնակության երկիրը *

Բնակության վայրը *

Զաղաքացիություն *

Ազգություն *

Սեռ *

Պահպանել

Զեղչեբերված կրթական աստիճանը

Տեղեկատվություն ընտանիքի անդամների մասին

Լրացուցիչ տեղեկատվություն

Այլ լեզուների իմացություն

Ֆայլեր

Պահպանել

Բոլոր դաշտերը լրացնելուց և «Ֆայլեր» դաշտում (Նկար 6) անհրաժեշտ փաստաթղթերը կցելուց հետո պետք է սեղմեք էջի ներքևի աջ հատվածում պատկերված դեղին՝ «Պահպանել» կոճակը:

011201.01.7 - Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա
Մագիստրատուրա

Անձնական տվյալներ	▼
Ձեռքբերված կրթական աստիճանը	▼
Տեղեկատվություն ընտանիքի անդամների մասին	▼
Լրացուցիչ տեղեկատվություն	▼
Այլ լեզուների իմացություն	▼
Ֆայլեր	▲
Դիմորդի լուսանկար	Ֆայլը վերբեռնված չէ
Անձնագրի լուսապատճեն	Ֆայլը վերբեռնված չէ
Սփյուռքահայերի համար ծննդյան վկայականի լուսապատճեն (տոտարական վավերացմամբ) կամ մկրտության վկայական	Ֆայլը վերբեռնված չէ
Կրթության մասին ավարտական փաստաթղթի լուսապատճենի թարգմանություն	Ֆայլը վերբեռնված չէ
Բժշկական տեղեկանք / ապահովագրություն	Ֆայլը վերբեռնված չէ
Ինքնակենսագրական (CV)	Ֆայլը վերբեռնված չէ
Հետբուհական մասնագիտական կրթության ստանալու համար՝ ընտրված մասնագիտության թեմայով գիտական ռեֆերատ	Ֆայլը վերբեռնված չէ
Միասնական քննությունների վկայագիր	Ֆայլը վերբեռնված չէ
Փաստաթուղթ՝ զինվորական ծառայության ամփոփման մասին (Դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների արական սեռի դիմորդների համար):	Ֆայլը վերբեռնված չէ
Կրթության մասին ավարտական փաստաթուղթ (Դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների համար)	Ֆայլը վերբեռնված չէ

Պահպանել

Հ.Գ. Այս գործողությունից հետո հայտը կերևա անձնական օգտահաշվի «Հայտեր» բաժնում (Նկար 7): «Գործողություն» դաշտում առկա կոճակների միջոցով հնարավորություն կունենաք խմբագրել Ձեր կողմից ներկայացված հայտը կամ ջնջել, այսինքն՝ չեղարկել այն (կախված հայտի կարգավիճակից):

Նկար 7.

Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգ

Հայտեր


Հայտ N	Ուսհաստատության	Դիմել է	Բակալավրիատ / մագիստրատուրա	Մասնագիտություն	Կարգավիճակ	Գործողություն
	Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա	Ընդունելություն	Բակալավրիատ	Բուժական գործ զինված ուժերում	Զեղարկված է	☹️
000069	Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան	Ընդունելություն	Մագիստրատուրա	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	sent	🗑️ ✎️
	Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան	Ընդունելություն	Մագիստրատուրա	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	Զեղարկված է	☹️

Ինչպե՞ս կատարել ընտրությունը ըստ մասնագիտության

Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգ մուտք գործելուց հետո կբացվի գլխավոր էջը, որտեղ ներկայացված են «Բուհեր» և «Կրթական ծրագրեր» ենթաբաժինները:


Քայլ 1. Սեղմեք «Կրթական ծրագրեր» կոճակը:

Նկար 1.



Կբացվի պատուհան, որտեղ ներկայացված են ոլորտները:

Նկար 2.



Քայլ 2. Ընտրեք այն ոլորտը, որի մասնագիտություններով հետաքրքրված եք: Կրացվի պատուհան, որտեղ ներկայացված են տվյալ ոլորտի մասնագիտությունները, հնարավոր է ֆիլտրել դրանք, որոնել և ընտրել ցանկից: Ցանկում՝ մասնագիտության անվան հետ միասին նշված է նաև՝ կրթական ո՞ր աստիճանի համար եք դիմում:

Նկար 3.

Հումանիտար Գիտություններ Եվ Արվեստ

Գլխավոր / Հումանիտար Գիտություններ...

Ֆիլտրեր

- ☐ Տեսչական արվեստ և մեդիաարվեստ
- ☐ Դիզայն
- ☐ Կերպարվեստ
- ☐ Կիրառական արվեստ
- ☐ Երաժշտական արվեստ և կատարողական արվեստ
- ☐ Միջոլորտային մասնագիտություններ
- ☐ Կրթագիտություն և աստվածաբանություն
- ☐ Պատմություն և հնագիտություն
- ☐ Փիլիսոփայություն և բարոյագիտություն
- ☐ Միջոլորտային մասնագիտություններ
- ☐ Բանասիրություն
- ☐ Լեզվաբանություն

Որոնել ..

Անվանում	Կոդ
1. Երաժշտական արվեստ Բակլավիրիատ	021501.01.6
2. Օպերատորություն Բակլավիրիատ	021101.02.6
3. Տեսաարվեստ Մագիստրատուրա	021101.03.7
4. Թատրոնի, կինոյի և հեռուստառադիոնկարչություն Բակլավիրիատ	021301.04.6
5. Գեղարվեստական լուսանկարչություն Մագիստրատուրա	021101.01.7

Քայլ 3. Սեղմեք Ձեր ընտրած մասնագիտության անվան վրա, այնուհետև «Ընդունելություն» կոճակը:

Նկար 4.

021501.01.6 - Երաժշտական արվեստ
Բակլավիրիատ

Հաստատություն	Դիմել
Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան	
«Ազգային Վեստերն» դատական փորձագիտական և հոգեբանության ինստիտուտ	
Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա	Ընդունելություն Բակլավիրիատ

Եթե տվյալ մասնագիտության համար արդեն իսկ հայտ եք ներկայացրել, կպատկերվի այդ մասին հաղորդագրություն:

Նկար 5.

Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգ

Երաժշտական արվեստ
Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա
Մագիստրատուրա

Կարգավորումներ

- ☒ Հայտեր
- ☐ Ելք

Դուք արդեն ունեք ակտիվ հայտ: Դուք չեք կարող նոր հայտ լրացնել

**** Ձեր կողմից լրացված հայտը կարող եք գտնել Անձնական էջի «Հայտեր» ենթաբաժնում:**

Քայլ 4. Եթե տվյալ մասնագիտության համար Ձեր կողմից ներկայացված հայտեր չկան, կբացվի նոր հայտ ստեղծելու էջը: Լրացրեք պահանջվող բոլոր տվյալները:

Նկար 6.

Հայտ N 000066
021501.01.6 - Երաժշտական արվեստ
Բակալավրիատ

Անձնական տվյալներ

Անուն, ազգանուն *
mm/dd/yyyy
Ծննդյան ամսաթիվ *
Ծննդյան վայրը *
Ընտրել

Բնակության երկիրը *
Ընտրել
Բնակության վայրը *
Բնակության վայրը
Քաղաքացիություն *
Ընտրել

Ազգություն *
Ընտրել
Սեռ *
Ընտրել


Պահպանել

Ձեռքբերված կրթական աստիճանը
Տեղեկատվություն ընտանիքի անդամների մասին
Լրացուցիչ տեղեկատվություն
Այլ լեզուների իմացություն
Ֆայլեր

Պահպանել

Յուրաքանչյուր բաժին լրացնելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Պահպանել» կոճակը, որից հետո կերևա հաղորդագրություն այն մասին, որ գործողությունը կատարված է:

Նկար 7.



Բոլոր դաշտերը լրացնելուց և պահպանելուց հետո «Ֆայլեր» հատվածում պետք է կցել անհրաժեշտ փաստաթղթերը՝ լուսանկար, անձնագիր, վկայական և այլն: **Կցվող փաստաթղթերը պետք է լինեն PDF ֆորմատի, այլապես համակարգը թույլ չի տա դրանք ներբեռնել:**

Նկար 8.

011201.01.7 - Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա

Մագիստրատուրա

Անձնական տվյալներ	▼
Ձեռքբերված կրթական աստիճանը	▼
Տեղեկատվություն ընտանիքի անդամների մասին	▼
Լրացուցիչ տեղեկատվություն	▼
Այլ լեզուների իմացություն	▼
Ֆայլեր	▲
Դիմորդի լուսանկար	Ֆայլը վերբեռնված չէ
Անձնագրի լուսապատճեն	Ֆայլը վերբեռնված չէ
Սփյուռքահայերի համար ծննդյան վկայականի լուսապատճեն (նոտարական վավերացմամբ) կամ մկրտության վկայական	Ֆայլը վերբեռնված չէ
Կրթության մասին ավարտական փաստաթղթի լուսապատճենի թարգմանություն	Ֆայլը վերբեռնված չէ
Բժշկական տեղեկանք / ապահովագրություն	Ֆայլը վերբեռնված չէ
Ինքնակենսագրական (CV)	Ֆայլը վերբեռնված չէ
Հետբուհական մասնագիտական կրթության ստանալու համար՝ ընտրված մասնագիտության թեմայով գիտական ունիվերսալ	Ֆայլը վերբեռնված չէ
Միասնական քննությունների վկայագիր	Ֆայլը վերբեռնված չէ
Փաստաթուղթ՝ զինվորական ծառայության անցյալի մասին (Դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների արական սեռի դիմորդների համար):	Ֆայլը վերբեռնված չէ
Կրթության մասին ավարտական փաստաթուղթ (Դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների համար)	Ֆայլը վերբեռնված չէ

Պատասխան

Քայլ 5. «Ֆայլերն» էլ պահպանելուց հետո Ձեր հայտը կհայտնվի Անձնական էջի «Հայտեր» ենթաբաժնում: Կերևա հայտի համարը, ուսումնական հաստատությունը, կրթական աստիճանը, մասնագիտությունը, կարգավիճակ դաշտում կգրվի, որ հայտն ուղարկվել է (Նկար 9):

Ներկայացված հայտն այս փուլում դեռևս կարող եք չեղարկել կամ խմբագրել:

Նկար 9.

Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգ						
Հայտեր						
Հայտ N	Ուսհաստատության	Դիմել է	Բավալավիատ / մագիստրատուրա	Մասնագիտություն	Կարգավիճակ	Գործողություն
000236	թեյթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Մագիստրատուրա	Գեղարվեստական լուսանկարչություն	Չեղարկված է	
000239	Երևանի «Ամանիա Հիթակցի» միջազգային հարաբերությունների համալսարան	Ընդունելություն	Մագիստրատուրա	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	Ուղարկված է	
000240	թեյթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Մագիստրատուրա	Բնօգտագործման տնտեսագիտություն	Չեղարկված է	

Ինչպե՞ս չեղարկել կամ խմբագրել հայտը

Քայլ 1. Համակարգի գլխավոր էջից մուտք գործեք «Հայտեր» բաժին (Նկար 1):

Նկար 1.

Հայտ N	Ուսանողության / Մագիստրատուրա	Դիմել է	Բակալավրիատ / Մագիստրատուրա	Մասնագիտություն	Կարգավիճակ	Գործողություն
000066	Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա	Ընդունելություն	Բակալավրիատ	Երաժշտական արվեստ	Չեղարկված է	[Icon]
000067	Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա	Ընդունելություն	Բակալավրիատ	Երաժշտական արվեստ	Ուղարկված է	[Icon]
000071	թեսթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Բակալավրիատ	Սպորտ	Ուղարկված է	[Icon]
	թեսթ ԲՈՒՀ	Բուհից թույլ փոխադրում	Մագիստրատուրա	Քննությունների անցում	Ուղարկված է	[Icon]
	թեսթ ԲՈՒՀ	Նախապատրաստական կուրս	Մագիստրատուրա	Անհատական կյանքի քննության տեխնոլոգիա	Մնացորդ	[Icon]
	թեսթ ԲՈՒՀ	Բուհից թույլ փոխադրում	Մագիստրատուրա	Անհատական կյանքի քննության տեխնոլոգիա	Մնացորդ	[Icon]
	Երևանի «Մանկա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան	Ընդունելություն	Մագիստրատուրա	Նախապատրաստական մանկավարժություն և մեթոդիկա	Մնացորդ	[Icon]
	թեսթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Բակալավրիատ	Սպորտ	Մնացորդ	[Icon]
	թեսթ ԲՈՒՀ	Նախապատրաստական կուրս	Բակալավրիատ	Սպորտ	Մնացորդ	[Icon]
	թեսթ ԲՈՒՀ	Նախապատրաստական կուրս	Բակալավրիատ	Սպորտ	Մնացորդ	[Icon]
	թեսթ ԲՈՒՀ	Բուհից թույլ փոխադրում	Բակալավրիատ	Սպորտ	Մնացորդ	[Icon]
	Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա	Ընդունելություն	Բակալավրիատ	Երաժշտական արվեստ	Մնացորդ	[Icon]

Այստեղ հասանելի են Ձեր բոլոր հայտերը՝ անկախ դրանց կարգավիճակից՝ ուղարկված, չեղարկված կամ սկսված: Ներկայացված են նաև տվյալներ ուսումնական հաստատության, ընդունելության տեսակի, կրթական աստիճանի և մասնագիտության վերաբերյալ: Այն հայտերը, որոնք ուղարկված են, ունեն նաև հերթական համար, որի վրա սեղմելով կտեղափոխվեք տվյալ հայտի էջ (Նկար 2):

Նկար 2.

Հայտ N 000066
021501.01.6 - Երաժշտական արվեստ
Բակալավրիատ

Մանրամասն տվյալներ

Անուն, ազգանուն * Anna
Մուտքի ամսաթիվ * 02/05
Մուտքի վայր * ԱՄՆ

Բնակության երկիր * ԱՄՆ
Բնակության վայր * Բոստոն
Բարձրագույն * Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ազգություն * Հայ
Սեռ * Իգական

Գրանցում

Գործողություն


Քայլ 2. «Գործողություն» դաշտից ընտրեք աղբամանի կոճակը, եթե ուզում եք ջնջել տվյալ հայտը (Նկար 3):

Նկար 3.

Հայտեր						
Հայտ N	Ուսհաստատության	Դիմել է	Բակալավրիատ / մագիստրատուրա	Մասնագիտություն	Կարգավիճակ	Գործողություն
	Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա	Ընդունելություն	Բակալավրիատ	Երաժշտական արվեստ	Չեղարկված է	
000066	Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա	Ընդունելություն	Բակալավրիատ	Երաժշտական արվեստ	Չեղարկված է	
000067	թեսթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Բակալավրիատ	Սպորտ	sent	
000071	թեսթ ԲՈՒՀ	Բուհից բուհ փոխադրում	Մագիստրատուրա	Բնօգտագործման տնտեսագիտություն	sent	
	թեսթ ԲՈՒՀ	Նախապատրաստական կուրս	Մագիստրատուրա	Անօրգանական նյութերի քիմիական տեխնոլոգիա	draft	
	թեսթ ԲՈՒՀ	Բուհից բուհ փոխադրում	Մագիստրատուրա	Անօրգանական նյութերի քիմիական տեխնոլոգիա	draft	
	Երևանի «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան	Ընդունելություն	Մագիստրատուրա	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	draft	

Կպատկերվի հաղորդագրություն «Համոզվա՞ծ եք» (Նկար 4): Հաստատելու համար սեղմեք OK:

Նկար 4.



«Հայտեր» էջը կթարմանա: Տվյալ հայտի կարգավիճակը կդառնա «Չեղարկված է»: «Գործողություն» դաշտում տխուր դեղին էմոջի կհայտնվի (Նկար 5):

Նկար 5.

Հայտեր						
Հայտ N	Ուսհաստատության	Դիմել է	Բակալավրիատ / մագիստրատուրա	Մասնագիտություն	Կարգավիճակ	Գործողություն
	Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա	Ընդունելություն	Բակալավրիատ	Երաժշտական արվեստ	Չեղարկված է	
000066	Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա	Ընդունելություն	Բակալավրիատ	Երաժշտական արվեստ	Չեղարկված է	
000067	թեսթ ԲՈՒՀ	Ընդունելություն	Բակալավրիատ	Սպորտ	Չեղարկված է	
000071	թեսթ ԲՈՒՀ	Բուհից բուհ փոխադրում	Մագիստրատուրա	Բնօգտագործման տնտեսագիտություն	sent	

Քայլ 3. Հայտը խմբագրելու համար «Գործողություն» դաշտից ընտրեք գրիչի կոճակը (Նկար 3): Կբացվի տվյալ հայտի էջը (Նկար 6) :

Նկար 6.

Օտարերկրյա դիմորդների ընդունելության համակարգ

Հայտ N 000071
031101.06.7 - Բնագտագործման տնտեսագիտություն
Մագիստրատուրա

Անձնական տվյալներ

Անուն, ազգանուն *
mm/dd/yyyy
Ծննդյան ամսաթիվ *
Ծննդյան վայրը *
Ընտրել

Բնակության երկիրը *
Ընտրել
Բնակության վայրը *
Քաղաքացիություն *
Ընտրել

Ազգություն *
Ընտրել
Սեռ *
Ընտրել


Պահպանել

Ձեռքբերված կրթական աստիճանը
Տեղեկատվություն ընտանիքի անդամների մասին
Լրացուցիչ տեղեկատվություն
Այլ լեզուների իմացություն
Ֆայլեր

Պահպանել

Քայլ 4. Փոփոխեք լրացված տվյալները «Անձնական տվյալներ» և/կամ մյուս դաշտերում և սեղմեք «Պահպանել» կոճակը: Կպատկերվի հաղորդագրություն այն մասին, որ գործողությունը կատարված է (Նկար 7):

Նկար 7.



Հ.Գ. Տվյալների թարմացման մեջ համոզվելու համար կարող եք կրկին մուտք գործել «Հայտեր» բաժին և սեղմել նշված հայտի խմբագրման կոճակը: